



ՀԱՅՈՒԹԻՒՆ

1889

ՀՈԿՏԵՄԲԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆՔ

Մ. ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ԿԱՐԾԵՑԵԱԼ

ՎԱՐԴԱՎԱՐԻ ՃԱՌՆ

ԵՒ Ս. ՅՈՒՀ. ԳԱՄԱՅՆԱՅԻ



ԶԱՅԿԱՆ հանճարներուն յատուկ բնագրոշմն այս  
եղած է, որ կը զանազանէ զնոսա սովորական  
մահկանացուներէն, այսինքն է, իրենց ժամանա-  
կակիցներէն աւելի ապագայից վրայ տարածել  
իրենց մոդական զօրութիւնն և զօրեղ ապղեցու-  
թիւնն. որովհետեւ ինչպէս նոցա բարձրաթռիչ  
հանճարն, սոյնպէս և այն հանճարոյն երկունքն ի-  
րենց զարուն անձուկ պարունակէն վեր բարձրանալով՝ ապագայ  
յառաջիսազացութեան նախագաղաքականով կը մնանին, կը յզա-  
նան և կը ծնանին. ուստի բնակոնսապէս նոցա մեծութեանն՝ աւելի  
ապագայ սերունդք քան ժամանակակիցք կարող են գիտակ լինել Այս  
բանիս ճշգրիտ օրինակներ կ'ընծայէ մեզ պատմութիւնն զբովհ. Ասա  
կերերան և գարձեալ զայլս բազումն. Սակայն այսպիսի մի ազ-  
գեցութիւն՝ որ ըստ ինքեան բնաւորեցաւ անմահացնել զարուց՝ ի  
զարս նոցա անուանին և զերկասիրութիւնն իեթ, երբեմն աղիտա-  
յեր արդիւնս իսկ յառաջ բերած է, 'ի մասս հանճարեղացն այնոցիկ

և մեզ իսկ զլխովին, որը նոցա մտաւորական ճոխ արդիւնաբերութեամբ ատիպած եմք անանիլ և պարծիլ իսկ։ Արդ անդստին՝ի վաղ ժամանակաց այսպիսի անմահունակ ազդեցութիւն մունեցաւ ազգիս վրայ նա ինքն հալածեալն ՚ի տգիտաց և անգոսնեալն Մ։ Խորենացի, իւր լուսափայլ հանճարովն ե ընդարձակ զիտութեամբ։ յոյր անուն ապա խրախուսելով մերթ հանճարեղքն և հետևակ գրիչք պէս-պէս ճառս և բանախօսութիւնս յօրինեցին և ընծայեցին հասարակութեան։ և մերթ այլ հաւաքողք ճառընտրաց, ուր որ համանուն Մովսէսներու կամ անանուն հեղինակաց զեղեցիկ զրութիւն մի զը-տան՝ չի դանդաղեցան Մ։ Խորենացոյ վերագրել։ Եւ այսպիսի թիւր ընծայութեամբք հետզհետէ յաճախեցին առընթեր հարազատից՝ նոյնակէս և անհարազատ գործեր, զորս յիշած է Հայ։ Դպրութեան չեղինակն, և որոց անյարմարութիւնքն արգէն իսկ ամենուն յայտնի են։ Բայց իմ խօսքս բացառութեամբ այն պերճաբանն և վեհիմաստ ճառին վրայ է միայն, զ՞որ կիրակոսէն սկսեալ՝ տոհմային մատենագիրք Քերթողակօրս Մովսիսի հարազատ գործոց մէջ գասեր են, և պէտք չէ շփոթել Հայկ։ Սովորեաց ԺԸ հատորի մէջ հրատարակուած ճառին հետ, որուն վերնագիրն է։ «Ի մեծի արուր տապանակի երանելոյն Մովս։ Խորենացոյ արարեալ ի կարիարարիմ որ բերէ զտօն Վարդավանի»։

Ինչպէս Մովսիսի միւս գործոց մասին, այսպէս և այս ճառիս նկատմամբ եղան ոմանք, որը բանաւոր տարակոյսներ յարուցին։ Բայց այս տարբերութեամբ միայն, որ Պատմագրուրեան, Աշխարհագրուրեան, Պիտոյից գրոց և առ Սահ։ Արծրունի գրած Թիրոյն հարազատութեան գէմ մաքառող տոհմային և օտարազգի քննասէրք՝ գրաւոր ընծայութիւնն և զէնս իսկ շողացուցին սրամիտ ճարտարութեամբ։ իսկ այս ճառիս անհարազատութեան վրայ ոչ առանձին ուսումնասիրութիւնք և ոչ իսկ գրաւոր ընծայութիւնք՝ ի վեր երեսեցան մինչեւ ցայսօր, ըստ իմն ծանօթութեան։ այլ միայն բացասական տարակոյսներ, զորս որ և է բանիբուն բանասէր լոկ ընթերցմամբ իսկ կարող էր ունենալ և ունեցան իսկ բազումք, տեմնելով յայնմ տարբերութիւն ոնց գրութեան։ Բայց թէ յորման կայացած է արդեզք այդ տարբերութիւնն և ինչ ծածուկ պատճառներէ յառաջ եկած, կարծեմ թէ ոչ զի ըստ արժան բաւականին գրեց և ած ՚ի հանդէս։ Երկրորդ, զիտելու ենք, որ Մովսիսի Պատմագրութեան հետ եղած բազդատութենէ մի եղակացուցեալ տարբերութիւնը՝ միայն բաւական ապացոյց չէ ճառիս անհարազատութեան։ որովհետև այսպիսի մի տարբերութիւն իրաք կը տեսնուի նոյն իսկ Հսկիսիմեանց ձասին և Պիտոյ։ յիշ գրոց մէջ, բազդատելով ընդ Պատմագրութեան։ և առկայն առաջնոյն հարազատութիւնն, ըստ իս, անուրանալի է, նկատելով այն գրութեան ժամանակը, պարագաներն և ներքին համաձայնութիւնք

ընդ պատմագրութեան Մովսիսի, վերջնոյն հարազատութիւնը բազմապիսի փաստերով ապացուցած կը համարի Թօկտօր բառւմ գարզնէր<sup>4</sup>, թէպէտե, ըստ իս, կան տակաւին տարակուսելու պատճառներ : Ուստի ես ուրիշ տեսակէտերով իսկ անհարազատութեան բնադրոշմ կը տեսնեմ ակներև Վարդավառի ձաւին վրայ, և ուրիշ զօրեղ ապացոյներ ևս կը յուսամ ածել առ այս :

Յիրաւի, բողդատելով այս ճառս՝ Հոփիսիմեանց Ներբողեանին և Պիտոյից գրոց հետ՝ կը տեսնելով, թէ որքան այս վերջին երկու գըրութեանց բառից կիրառութիւնք, շարագրութեան կազմութիւնն, դարձուածք բանից և նախադասութիւնն կը տարբերին 'ի Պատմագրութենէ, զրեթէ նոյնքան ևս առաջինը կը տարբերի 'ի վերջնոց անտի, մի և նոյն կէտերով: Դիտելու է, որ այսու ես չեմ ուզեր հետեցընել, թէ ուրեմն պէտք է որ համաձայն լինի Պատմագրութեան ոճնյն և լեզուին, թէպէտե լոելայն այսպիսի թիւրիմաց հետեւթիւն մի կը նշանարուի: այլ բացառութեամբ միայն կ'ուզեմ եզրակացնել, թէ այդ ճառը գլխովին ինքնուրոյն բնազրոշմն կը կրէ իւր վրայ՝ մասնաւոր առանձնայատկութեամբք, որք չեն գտնուիր ոչ 'ի Պատմագրութեան անդ և ոչ իսկ յիշեալ երկասիրութեանց մէջ, ուրոնք իրենց առանձնայատկութեամբք հանդերձ՝ պահած են իրենց վրայ 'ի բազում ուրեք և զարու տիպը: իսկ սորայս ընդհակառակն՝ այն դարու պարունակէն դուրս է: Արդ ինչպէս Պիտոյից գրոց առանձնայատկութիւնքն յառաջ եկած են այն յունական հեղինակութիւններէն, որպիսի են Աֆդոնիոս, Թէովն, Լիբանիոս, Հերմոզինէս և այլք ոչ սակաւք, որք իմաստակական ոճով և լեզուով կը ճարտարաբանէին, և որոնց հետեւցաւ «Պիտոյից» հեղինակն 'ի թարգմանելն կամ՝ լաւ ևս 'ի թարգմանաբար յօրինել զայն, և Հոփիսիմեանց ճառին առանձին տիպն՝ արգասիք է Մովսիսի աշխոյժ հասակին: այսպէս և Վարդավառի ճառին յատուկ բնագրոշմը՝ պէտք է որ զլխովին տարբեր ժամանակի և գրչութեան ներքեւ ձեացած լինի: ուստի եթէ ինքնագիր համարիցի որ զայն և եթէ թարգմանաբար յօրինեալ, և դարուն մէջ բացարձակապէս չկարէ կատարուած լինել, այլ դարերէ վերջ: Տեսնենք ստուգիւ այսպիսի մի եղելութեան ներքին և ներքնոց հետ սերտիւ լըորդեալ արտաքին փաստերն:

Ա. Այս ճառիս մէջ կը գտնուին կիրառութիւնք բազմազիմի բարդ բայից և բառից, յորոց մի մասը ժամանակագրութիւնը, 1865, պիտի միայն գործածուած են: իսկ միւս մասը՝ ճառիս հեղինակին մի այսպէս յատուկ են: Օրինակի աղազաւ, յէջ 327, «Վայելլազարդեալ-

1. Über das Buch «die Chrie». Leipzig, 1886.

2. Հայ Վենետիկեան պատ. Մովս. Խորենացոյ մատենագրութիւնը, 1865, պիտի միայն տեղեաց յառաջբերութիւնը:

կենդանածնելով — սպասահարկեալ — ճառագայթակերպեն — շրջա-  
փայլէ — պայծառազարդեալ . — յէջ 328<sup>я</sup> անուշահոտանան — պարալ-  
նու — հրաշագարդեալ . — յէջ 330<sup>я</sup> բարձրածայրեալ . — յէջ 331<sup>я</sup> աս-  
տուածակերպեալք . — յէջ 332<sup>я</sup> արտօնացեալ — հրաշարուեալ . — յէջ  
333<sup>я</sup> բացածագեաց — լուսակերպելով . — յէջ 334<sup>я</sup> ոսկեվարսեալ . — յէջ  
335<sup>я</sup> զդեստաւորեալ — պայծառակերպեցին : Երկնախոն — տիեզե-  
րագնաց երկնախմբից — զանգերանութեանց — երեքպայծառեան  
(τριλαμάρις) շրջացանական — զանձմարտութեան — լուսասաղարթ — աս-  
տուածանմանակերպութեամբ — հրաշապայծառ — զալարավայր և  
այլն :

Բ . Յէջ 334 կ'ըսուի այսպէս . «Եւ ևո յոյժ վայելուչ է անուն տօ-  
նիս՝ զոր կոչէ Ե՛կեղեցի . զի Վարդապառ ասի, որ է արդ աշար, և  
կոչի Վարժարան : Այլ վասն զի յոյնն զա Պայճառակերպութեան  
և Պատակաց կոչէ տօն . իսկ ազդ Հայաստանեայց՝ նոյն և մի զորպայս  
ձայնէ հրաշափառ պայծառութիւն, զոր կանխաւ բանն տպաւորեացու  
եւ յէջ 329, թէ «Զոր և Եկեղեցի հրաշապայճառ ցննուրեամբ  
տուն :»

Անտարակոյս ոչ միայն այս պարբերութիւնս, այլ նոյն իսկ աստի  
ցէջն 337 եղած միջոցն, յորում կը մեկնէ հեղինակ ճառիս արդ ա-  
շար և Վարժարան յորջյորժմանց նշանակութիւնն՝ յարմարութեամբ  
Ս . Գրոց, ինչպէս նաև յէջն 326—327 եղած միջոցն, այսինքն է յի  
պարբերութենէն սկսեալ՝ մինչև յթ պարբերութիւն 323 իջին, յո-  
րում զյզգ ընդ լուսաւորաց և պայծառութեան բնութեան՝ կը նկա-  
րագրին բանաստեղծօրէն գերաշխարհիկ լուսաւորքն Քրիստոս և  
Աստուածածին և պայծառութիւն բանական բնութեանս մերոյ, հայ-  
կազն հեղինակի սեփական գրչին եթէ ոչ գիւտ՝ այլ գեղեցիկ ընդլայ-  
նումն համարելի է, և Հայաստանեայց մէջ կատարուած հանդէպն  
և ցննութիւնը միայն կը ներկայացնեն մեզ : իսկ գալով մէջ բերուած  
տեղոյն՝ գիտելու ենք նախ, որ «յոյնն բառով կարելի է հասկանալ  
թէ գրիշ զոմին, որուն հետևած լինինա, և թէ յունական ազդն : Ուս-  
տի այս բացատրութիւնս, թէ և Զի յոյնն զա Պայծառակերպութեան  
և պատակաց կոչէ տօն և, ոչ Մ . Խորենացւոյ և ոչ իսկ նորա ժամանա-  
կակից մի ուրիշ մատենագրի բերանը կարեն լինել հասկանալի . որով-  
հետեւ Եկեղեցի բառով՝ եթէ ընդհանուր կերպով Յունաց և Արե-  
մըտեայց հասկանանք, և եթէ բացատրութեամբ Հայոցը միայն, միշտ  
կը մնան հակասական, և են ժամանակագրութեան խոշոր վրիպակ-  
ներ . այնու զի և գարուն զեռ ոչ Յոյնք և Արևմտեայք այն տօնը  
աշխարհախումբ հանդիսիւ կը կատարէին<sup>1</sup> Մետամօրֆասէւ և Ըտեգնան

<sup>1.</sup> Այս տօնիս առթիւ աեւ P. de Lagarde, Abhandlung Neu - Griechisches aus  
Klein Asien, Ueber Feste des christlichen Cappadociens,

տիտղոսներով, և ոչ Հայք Պայծառակերպութեան կը կոչէին տօն, այլ Այլակերպութեան - *Metrumōrphosis*, *Transfiguratio*, ինչպէս որ յայտնի կերպով կը ներկայացնեն մեղ և դարձ թարգմանիչք մեր յԱւետարանին Մատթէոսի Ժէ, 2, Մարկոսի Թէ, 4, և Ղուկասու Թէ, 29, Այսպէս է նաև Վարդավառի շարականին մէջ, զոր ոմանք 'ի պատմչաց Մ. Խորենացւոյ կ'ընծայեն, և ոմանք Անանիայ Շիրակացւոյ. և թէ Գանձ. Եկեղ. Անանիա, Խոսրով և ճառիս անժանօթ հեղինակը Պառաջինն 'ի վար արկած են բառս Պայծառակերպութիւն փոխանակ Այլակերպութեան:

Եւ յիրաւի, եթէ յունական եկեղեցւոյ մէջ անդատին 'ի Ե դարէն Հաստատուած լինէր այդ տօնը, կարեի բան չէ որ սոյն և յաջորդ դարուց մէջ եկեղեցական Հայք առանձին քարոզով և ներրողենիւ փառաւորած լինէին զայն. և սակայն մինչեւ յԱվելերորդ դար ոչ ուրեք գտանին Այլակերպութեան տօնին առմիւ խօսուած և գրուած ճառեր: Թէպէտ և Յովհ. Ոսկիրերան, Օղոսակինոս, Ս. Լեռն, Ս. Պրոկլ և Մաքսիմոս վկայն աւանդած են մեզ ինչ ինչ, բայց Մատթէի մեկնութեան մէջ, և ոչ թէ մասնաւոր երկասիրութեամբ: Այնպէս որ մեզի ծանօթ յոյն եկեղեցական երկասիրութեանց մէջ Յովհ. Դամասկացին առաջին անգամ՝ կը ներկայանայ մեզ Այլակերպութեան տօնին վրայ յօրինած իւր հրաշաբան ճառով, որուն վրայ կը հրաւիթեմ աստ իմ ընթերցողաց մասնաւոր ուշադրութիւնը:

Զգիտեմ արդեօք այսպիսի մր եղելութեան վրայ տարակուսելուն համար, թէ նորա մասին անաւելեակ գոլով անծանօթ հեղինակն ճառիս հետևեալ հակասական բացատրութիւնը կ'ընէ, որ աւելի կը մատնեն նորա յենանոթիւնը. Կըսէնա յէջ 337 վասն Վարդավառի. և Սա առաջին յԵկեղեցւոյ օրինադրեցա յԱռաքելոց տօն աւետարեր, որ ոչ մտան 'ի լրջան ըներեցուածոց ընկ այլսն », այսինքն է, ընդ այլ տօնս Եկեղեցւոյ: Սակայն դիտելու ենք, որ եթէ սոուզիւ յԱռաքելոց անտի օրինադրուած և Եկեղեցւոյ մէջ շարունակուած տօն լինէր, անշուշու ուրիշ տնօրինական տօնից պէս նաև 'ի շրջանս ընթերցուածոց և 'ի ժամանակարգութեան իսկ Ասորուաց, Ս. Բարսղի և Ոսկերերանի իւր յատուկ տեղին ունեցած պիտի լինէր: Այլ ընդ հակառակն ոչ առաքելական Սահմանադրութեան և ոչ այլ նախնի դարուց Եկեղեցական յիշատակարանաց մէջ կարելի է գտնել յիշատակութիւն ինչ հաստատութեան տօնիս: Մանաւանդ որ աւելին է, այն եռամիւ երջանիկ Սուաքեալներէն՝ որք արժանի եղան հանդիսակեց լինել Քրիստոսի Այլակերպութեան և տեսնելնորա անպատում փառքը, Քետրոս հազիւ կ'ակնարկէ զայն 'ի թղթի իւրում, իսկ այլքը ռած են: Արդեօք խոնարհութեան համար, թէ ընդ հակառակն Տետրան մերոց պատուէրը մինչև 'ի վերջ պինդ պահելով, թէ ՇՄԻ ումեք ասիցէք զտեսիլդ » Աւստի նախնին Եկեղեցաց մէջ եղած այս լուս-

թիւնը տեսնելով յամին 1152 Պոլժոն երէցն Պրումի, համարեցաւ  
թէ նոր ուրեմն կրօնաւորաց ձեռքով հաստատուած ըլլայ այդ տօնը,  
Բարոնիոս<sup>1</sup> ընդ Հակառակն, Ս. Եփրեմի, Ս. Բարսղի Սելևկացւոյ և  
Ս. Անդրէի կրետացւոյ երկասիրութիւներէն կը հետեցնէ, թէ այս  
տօնիս հնութիւնը կարելի է մինչև ցդ գար անդր՝ի վեր հանել:  
Առաջան այս կարծեաց ոչ մին և ոչ միւսը կարեն լինել ճշմարիտ. այլ  
պէտք է ասել, թէ առ Յոյնս և առ Արևմտեայս կամ է գարուն վեր-  
ջերն և կամ յամին 787 պատկերամարտից դէմ՝ի Նիկիա գումա-  
ռուած Երկրորդ ժողովքին մէջ որոշուած ըլլայ իրբն տօն վասն ընդ-  
հանուր եկեղեցւոյ. Յիրաւի, այս ժամանակ զրեց Ղեռնդիոս Անկիւ-  
րացի իւր ճառն յԱյլակերպութիւն Քրիստոսի. և Ս. Իդղեփոնս ըս-  
պանիացի եպիսկոպոսն յամին 845 կը խօսի զայսմանէ իրբն տա-  
րոյն շքեղագոյն տօնախմբութեանց մին. այս ժամանակէն վերջ զը-  
րուած հնագոյն վկայաբանութիւնք և Յայսմաւուրք, զորս յիշեն  
Բարոնիոս, Մարտիյնի և Թումասին<sup>2</sup>, կը ներկայանան մեղ Այլակեր-  
պութեան ճառերով, որք յայտնի ապացոյց են տօնիս հաստատու-  
թեան. որովհետեւ եկեղեցական տօնից ստոյգ ներկայացուցիչքը դոքա-  
են, և ոչ թէ դ կամ Ե գարէն մնացած սակաւաթիւ յիշատակարան-  
քըն և Սինա լերան վրայի Ս. Կատարինէ եկեղեցւոյ մէջ եղած նկա-  
րէ մուզափիկներն, որք պարզապէս Մատթէի Աւետարանի մէջ յի-  
շուած մեծագոյն դէպքը կը ներկայացնեն, և ոչ թէ տօնիս հաստա-  
տութիւնն. Յամին 1857 կալիսուոր Գ. Քահանայապետին մէկ շըր-  
ջարերական թուղթն, որով կը պատուիրէ Հաւատացելոց, մասնա-  
ւոր պաշտամունքով կատարել զտօնս զայս, յսյանի նշան է, ըստ ա-  
սելց Բէրժիէի, թէ մինչև այդ ժամանակ, ամէն քրիստոնեայ աշխար-  
հաց մէջ ընդհանուր կերպով տարածուած չէր այն:

Արդ, ուրիշ ազգաց մէջ որքան որ անորիշ մեացած է տօնիս հաս-  
տատութեան ժամանակամիջնոցն, մանաւանդ թէ համեմատութեամբ  
նոր, այնքան ևս առ Հայաստանեայս հին կ'երեսի, և որոշեալ ժամա-  
նակն. Ս. Սահակ Պարթէ իւր Կանոնական թղթոց միոյն մէջ, որուն  
վերնագիրն է, « Թէ ո՛րպէս սահմանեցա կարգ ուշտի և որոշման  
վանաց », ի մէջ այլոց տօնից, զորս կատարէին Հայք ՚ի Ե գարուն,  
զկնի մարտիրոսաց տօնին անմիջապէս կը յիշէ յէջ 111 և զվարդա-  
վառին այսպէս. « Եւ տօն ամենայն մարտիրոսաց՝ զոր մաստրուն  
կոչեմք. Վարդաղառին մատաղենիքն միայն պտուղ յամենայն ար-  
մբտեաց քոռ քոռ՝ի ժողովրդականաց և յամունացելոց Քահանայից  
յառաջին արմտեաց, այսինքն է, յընտրոցն ՚ի վանս կատարեսցին» :

1. Baroniū Not. ad Martyrol. ad diem aug. VI.

2. Traité des Fêtes, 1, 2, c, 19 § 14 et 15.

3. Առփելք Հայկականք, համար Վենետիկ, 1853:

Թուի թէ վարդավառին սեռական հորովով՝ լսելեայն տօն կը հասկա-  
նայ սուրբ Հայրապետս։ Բայց թէ արդեօք այդ տօնը նա ինքն հաստա-  
տեց, թէ իրմէ առաջ կար. 'ի Հրէից անտի առին թէ 'ի Յունաց. եկե-  
ղեցական էր արդեօք, եթէ պարզապէս ազգային. Մարտիրոսաց՝ այ-  
սինքն է Յովհ. Կարապետին և Աթանազինեայ վկայի տօնին հետ ի-  
միասին կը խմբէին, թէ առանձին. այս կէտերս գժուարին է որոշել։  
Մատաղի սովորութիւնը՝ կարծէք թէ տօնիս հրէական, կամ լաւ ևս,  
երուսաղեմեան եկեղեցին առած ծագումը կը թուի ցուցանել, որուն  
այլուր կը համաձայնին Յովհ. Օձնեցին և ն. Լամբրոնացի։ Սակայն  
վերոյիշեալ եկեղեցիներէն առնուած չի կրնար Ըլլալ, և սորա պատ-  
ճառներն արդէն իսկ տեսանքը Բ. Դիտելու է, մատաղի սովորութիւնն  
հեթանոս Հայաստանին իսկ յատուկ էր. ուստի Դ. գարուն սկիզբը՝  
Երբ Ս. Գրիգոր վարդամատն Անահայ տօնը փոխեց 'ի տօն Այլա-  
կերպութեան, նորա Հնագոյն յորջյորջման, այսինքն է, Վարդավառին  
հետ ի միասին այն հինաւուրց արարողութիւնքն և զենմոնքն իսկ  
պահեց անազարտ, սրբելով և նուիրելով զերախսայրիս հեթանոսիկ  
զիցուհւոյն՝ Տեառն բոլորեցուն։ Ուստի Հայաստանեայց եկեղեցւոյ  
այս առանձնաշնորհութեան, այսինքն է, առաջին լինելուն 'ի հաս-  
տատել զ.քրիստոնէական տօնախմբութիւն Վարդավառին՝ պատճա-  
ռն պարզապէս դիպուածական է. որովհետեւ հինաւուրց Հայաստանի  
տարեմուտն և Նաւասարդը միայն Օգստասու ամսոյն մէջ հանդիպե-  
լով՝ բնական կերպով կը համապատասխանէր Հրէից Տաղաւարահա-  
րաց տօնին և աւետարանական Այլակերպութեան օրուան։ Եւ որով-  
հետեւ անկարծի էր Հօր լուսաւորութեան մերոյ՝ բուլրովին ոչնչացնել  
զաօնն զայն համաշխարհական, անոր համար հարկ եղաւ փոխոխմամբ  
սրբել զայն՝ Յիրաւի, առ հեթանոս Պարսիկս ևս գոյր նէրուզի և  
վարդացանութեան տօնը, բայց որովհետեւ ուրիշ ամսոյ և օրուան  
մէջ կը հանդիպէր, անոր համար քրիստոնեայ Պարսկաստանը՝ չի կա-  
րաց զրւգել ընդ Այլակերպութեան. մինչև որ յետոյ ուրեմն եկեղե-  
ցական օրէնք վճացեցին թողրու զառաջինն և պաշտել զվերջինն։  
Գալով Հայոց, դիտելու ենք, որ յԱղաթանգեղ կաւանդուի, թէ  
Նաւասարդին օրը կը կատարուէր Յովհաննու և Աթանագինեայ  
տօնը՝ աշխարհախումբ հանդիսիւ. ուրեմն ինչպէս կարէր տօնուիլ  
միանգամայն և Վարդավառինը, Զիցէ մարթ աստի եղրակացնել,  
թէ Դ. և Ե դարուց մէջ Վարդավառը կը կատարուէր տակաւին  
իրբեւ աշխարհական հանդիսապրութիւն իմն և ոչ իրբեւ յեկեղեցւոյ  
օրինադրեալ մի առանձին տօն։ Կարծէք թէ զայս կ'ուզեն անկնար-  
կել իրօք և Ս. Սահակայ վերոյիշեալ խօսքերն, յորս նա մարտիրո-  
սաց տօնին կից անմիջապէս կը յիշէ զմատաղենիս և զերախսայրիս  
Վարդավառին, և ոչ զտօն. երկրորդ, ըստ հեթանոսական անուանա-  
կոչութեան Վարդավառ կ'անուանէ զայն և ոչ թէ Այլակերպութիւն.

մինչդեռ ճառիս հեղինակն , անտես առնելով (չզիտեմ ինչ պատճառ ուաւ) հեթանոսիկ Հայաստանի մօր վարդամատն Անահտայ տօնի ծագումն և հանդիսադրութիւնքն՝ երրայեցւոց Յիսոներեակիւ կը մեկնէ զվարդավառ հին անունս :

Գ. Յէջ 333 ճառին վարդավառի կ'ըսուի վասն Տետոն մերոյ Յիսուսի Քրիստոսի . Ընդ ամենայնուն մեր ճանապարհորդեաց հոգեկան կիրա առանց մեղաց և ապականութեան , միով դիմաք , միով կամաց շարժութեամբ : Այս վերջին խօսքերս կարելի է այսպէս մեկնել , այսինքն է , ինչպէս 'ի Քրիստոս զգայական կամքը՝ բանականին հրամանատարութեամբ կը շարժէր , այսպէս և բանական կամքը՝ ընդ աստուածայնովն , որով կը յօրինէր մի միայն ներդաշնակութիւն՝ մարդկային և աստուածային կամաց շարժութեանց 'ի Քրիստոս , յամենայն 'ի գործա նորա . այս առումն ուղիղ է և Մովսէս ինքնին և կամ այլ ոք 'ի Ե գարու գրչաց կարող էր ասել . որպէսիւտե այդու ոչ բառնին գործողութիւնք մարդկային կամաց , այլ կը կատարելագործին . սորա յայտնի փորձը կը գտնենք նաև 'ի մեզ , երբ բանական յօժարութեան ձեռքով՝ կը զեկավարենք մեր զգայական և կոյր յօժարութիւնքն : Բայց թէ ստուգիւ այս առմամբս դրուած են սոյն տեղույն մէջ յիշեալ խօսքերն . և եթէ իրաքիցեն վերագրելի Մատորենացւոյ . կարծեմ թէ ոչ Որովհետեւ այդ խօսքերէն քիչ առաջ և վասն զի յամենայնի ելովն բառերով ակսող պարրերութիւնը՝ Դամակացւոյ վերայիշեալ ճառին մէկ տեղույն յառաջբերութիւն է . յորում սակայն կամաց վրայ բնաւ չխօսուիր : Բ. Թէ Դամասկացին և թէ կարծեցեալ Մովսէսն՝ անմիջապէս քիչ յառաջ փառաւորելոյն Քրիստոսի երկու բնութեանց վրայ կը խօսին , այսինքն է , աստուածայնոյն և մարդկայնոյն՝ յօրմէ անձնաւորական միութեան ձեռքով՝ կ'արտափայը լի Աստուծոյ անճառելի փառքը և կը յափշտակէ զառաքեալսն . ուստի այսպիսի մի պարագայի մէջ՝ անհասկանալի բան կը լինէր յանկարծակի սկսել կամաց վրայ խօսիլ , ուր բնաւ առիթ չկար խօսելու . մանաւանդ զեռ աւելի անհասկանալի՝ երկու բնութենէն կամ գոյացութեանց եղրակացնել զիմ միայն կամն , այնու զի կամք կամ գործողութիւնք կամաց անհրաժեշտ հետևանք են բնութեանց : Աւստի այն բացատրութիւնը կամ մի ուրիշ գրչէ ներմուծեալ համարելի է անդ , և կամ ըսել , թէ ճառիս անծանօթ հեղինակն միակամեայց խմբակէն լինելու էր , և ոչ թէ Ե գարու Հայաստանեայց Հարց մին , որոց ժամանակը Քրիստոսի երկուց կամաց վրայ ոչ գեռ մոլորու . թիւն ծագած էր և ոչ այլ խնդիր կայր , մանաւանդ թէ զոյց ընդ Մամբրէի մեկն բանիւ կ'ընդունէին զերկուս ներգործորիւնս 'ի

1. Զի «Խ Յարուրիւն Ղազարո» կ'ըսէ այսպէս : Անմարմին զօրութիւնքն մարմառն երեւցան , այլ ոչ մարմառան . ու միայն կրէ զերկուս ներգործորիւնս , և այլն :

Փրիստոն: Բ. Դ գիտելու է, որ այլուր իսկ ձեռագրաց մէջ Մովսիսի  
ընծայուած է միակամեայց Տրամախօսութիւն մի ընդ Քաղկեդոնա-  
կանս, որուն անհարազատութիւնը՝ բնաւ տարակոյս չի վերցներ:

Գ. Յովհան Երզնկացի և Արքաստակէս ոմն, որք շարունակեցին  
զմեկնութիւն Մատթէէ՛ զր Ն. Շնորհալի մինչև եօթներորդ գլուխն  
հասուցած էր, Քրիստոսի այլակերպութեան մեկնութիւնը գրեթէ  
բառ առ բառ և քայլ առ քայլ Ասկիբերանի 57 ճառէն փոխ առած  
են. իսկ Վարդավառի ճառէն ոչ ինչ: Որդ, այս երկոյթս իսկ նշան է,  
թէ ոչ միայն այդ ճառը խորենացւոյն չէր, այլ գուցէ թէ այդ ժա-  
մանակին. և ոչ իսկ ամենուն ծանօթ էր այն. ապա թէ ոչ կարելի  
բան չէ, որ անտի ևս հատուածներ մէջ չի բերէին, որ աւելի ճիխ և  
հրաժարութիւ կ'երևի բան զհամառօտազիծն Ասկիբերանի. Թող զի  
խորենացւոյ անոնը միայն շատ էր զրաւել նոցա զուշն և զուրուչ:  
Զարմանալի երևոյթ մի է և այս, զի Հայոց մէջ բաց ՚ի այս ճառէս,  
և մի այլ ճառէ՛ որ եղիշէի ընծայուած է (Սոփ. Հայ. հա. ԺԲ. էջ 5)  
Վարդավառի վրայ գրուած ուրիշ ճառ ձեռքբերնիս հասած չէ:

Ե. Ի՞՞ Ճառընտրի մէջ, զոր օրինակեց Հ. Ն. Մարգիսեան Առաքե-  
լց վանքի երկաթագիր և ամենահին ճառընտրէն Սողոմոնի Մաքե-  
նոցաց վանահօր, Վարդավառի ճառը Դաւիթի Անյաղթին ընծայուած  
է, այսպէս. «Դարքի Փիլիսոփայի ասացեալ Նիրողեան յահազ  
Վարդավառին: Արդ այս երեսոյթէս կարելի է հետեցնել թէ Վար-  
դավառի ճառն իսկզբան անդ առանց հեղինակի անուան էր, որով  
ոմանք ըստ կամս Դաւիթի ընծայեցին զայն, իսկ այլք Մովսիսի:

... Շարունակելի

Հ. Բարօն. Արքաստան

### ԵԶՆԻԿ ԵՒ ԻԼԻՐ ԵՐԿԱԾԽԻՐՈՒԹԻՒՆՆ.

—♦♦♦♦♦—

Եղնիկ, որ ՚ի գեռատիս հասակէ՝ յունական պայծառ երկնքին ներքեա՝ ծը-  
ծեր էր այն իմաստասիրդ ողը, հմուցեր էր յոյն իմաստասիրաց ամէն վար-  
դաստութեանց, և իւր մտաց մէջ ամբարեր էր Ա. Գրոց. և Ա. Հարց գի-  
տութիւնը, զօրս և յաճախ նորին իսուզարկութեամբք կը համեմատէր ընդ  
արտաքին իմաստութեան, կիջնէ արդ յասապրէզ (յԵրրորդ զիրոն) կոտիլ  
և ոգորիլ իմաստափրաց պարուն զէմ: Բնաւ ոչ մի պարագայի մէջ է: զինիկ  
չի մնար ստորին քան զհակառակորդան. իւրաքանչիրին զէմ խօսելու միջոց՝  
իրենց յատուկ և անձնական զէնքեր կը գործածէ և կը յաղթահարէ զա-  
ննիք: շատ համարելով իրեն պատշաճողական զէնք զԱ. Գիրս միայն. և  
աստ ահա իմաստասիրաց հակառակ՝ իմաստասիրօրէն կը հականառէ, յո-  
րում հաւասարապէս կը փայլի թէ նորա հմտութիւնն իմաստասիրական  
գրութեանց մէջ, և թէ ՚ի բնական գիտութիւնն՝ մանաւանդ յաստղաբաշ-  
իականն ունեցած բարգաւաճ և զօրաւոր միտքն: